ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սամվել Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ղազախստանի Հանրապետություն (Աստանա), 2018թ. հուլիսի 10-ից 12-ը

4. Հրավիրող կողմը

Միջազգային գիտատեխնիկական կենտրոն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) կառավարիչների խորհրդի 66-րդ նիստի աշխատանքներին

6. Քննարկված թեմաները

ՄԳՏԿ քաղաքականության փոփոխություն, գերակա ուղղություններ, տարածաշրջանային ծրագրեր, համագործակցություն միջուկային ոլորտում, համատեղ փորձագիտական համակարգ, հայ-վրացական համագործակցության ակտիվացում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի 66-րդ նիստին քննարկվել են բազմաթիվ հարցեր, այդ թվում.

- ՄԳՏԿ քաղաքականության փոփոխության հետ կապված հարցեր. նախատեսվում է ՄԳՏԿ աշխատանքներին ներգրավել նոր դոնոր երկրներ՝ ՀԱՀ, Լաոս, Կամբոջա, Միջին Ասիայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի մի շարք երկրներ՝ շուրջ 60 երկիր,
- ՄԳՏԿ ծրագրերի իրականացման ընթացքը. ՄԳՏԿ-ն շարունակելու է իրականացնել ՄԳՏԿ անդամ երկրների հետ ծրագրերը, հատուկ ուշադրություն դարձնելով տարածաշրջանային նշանակություն ունեցող ծրագրերին,
- տարածաշրջանային ծրագրերին ԱՊՀ անդամ պետությունների համաֆինանսավորման սկզբունքով մասնակցության հարցը,
- ՄԳՏԿ շրջանակներում ներկայացված հայտերի գիտական փորձաքննության արդյունքների քննարկում և հաստատում:

Ղազախստանի Հանրապետություն գործուղման շրջանակներում Սամվել Հարությունյանը հանդիպել է Վրաստանի Շոթա Ռուսթավելու անվան ազգային գիտական հիմնադրամի տնօրեն Մ. Նիկաբերիձեի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցության ընդլայնման ուղիները և համատեղ գիտական ծրագրեր իրականացնելու հնարավորությունը:

Այցի շրջանակներում 2018թ. հուլիսի 10-ին ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը հանդիպում է ունեցել Ղազախստանի Հանրապետության միջուկային հանձնաժողովի տնօրեն Ն. Ժդանովայի հետ, որի ընթացքում քննարկվել է միջուկային ոլորտում խաղաղ նպատակներով համագործակցության հնարավորությունը:

2018թ. հուլիսի 11-ին Ս. Հարությունյանը հանդիպել է ՄԳՏԿ գործադիր տնօրեն Ռ. Լեհմանի հետ, որը վերահաստատել է ՄԳՏԿ-Հայաստան սերտ համագործակցության կարևորությունը և հավաստիացրել է, որ ՄԳՏԿ-ն պատրաստ է շարունակաբար աջակցելու Հայաստանի Հանրապետությանը մասնակցելու ՄԳՏԿ կողմից իրականացվող ծրագրերին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի կողմից նիստին հաստատվել են ՄԳՏԿ նոր գերակայությունները.

1. միջուկային անվտանգություն,
2. պայքար ահաբեկչություն դեմ,
3. սահմանների պաշտպանություն,
4. պայքար թմրանյութերի տեղափոխման դեմ,
5. կենսաբանական անվտանգություն,
6. տեխնոլոգիաների փոխանցում:

ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի նիստի ընթացքում ներկայացվել և քննարկվել են ՄԳՏԿ ծրագրերի փորձաքննության արդյունքները: Կառավարիչների խորհուրդը քվեարկությամբ հաստատել է փորձաքննության արդյունքները և ֆինանսավորման է երաշխավորել երկու գիտական ծրագիր, որոնցից մեկը շուրջ 300 000 ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով հայ-վրացական համատեղ ծրագիր է:

Վրաստանի Շոթա Ռուսթավելու անվան ազգային գիտական հիմնադրամի տնօրեն Մ. Նիկաբերիձեի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել գիտության ոլորտում համագործակցության մասին համաձայնագիր ստորագրելու վերաբերյալ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև համատեղ փորձաքննություն իրականացնելու նպատակով Հայաստանի և Վրաստանի անկախ փորձագիտական համակարգերը միավորելու վերաբերյալ:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կարևոր դերակատարումը ՄԳՏԿ գործունեության մեջ, որոշվել է Հայաստանում անցկացնել ՄԳՏԿ նախատեսված երեք կարևոր միջոցառումները.

- 2018թ. նոյեմբերին կկայանա գիտական փորձագետների համագործակցությանը նվիրված սեմինար,

- 2018թ. դեկտեմբերին՝ 1988թ. Սպիտակի երկրաշարժին նվիրված խորհրդակցություն,
- 2019թ. հունվարին՝ սննդի և կենսաբանական անվտանգության հարցերով ՄԳՏԿ շրջանակներում իրականացված ծրագրերի արդյունավետությանը նվիրված խորհրդակցություն:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի 66-րդ նիստի ընթացքում ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահ Սամվել Հարությունյանն առաջարկել է ՄԳՏԿ ծրագրերի գիտական փորձաքննություն իրականացնելու համար օգտագործել ԱՊՀ անդամ պետությունների, այդ թվում Հայաստանի Հանրապետության անկախ փորձագիտական համակարգը:

Գիտության ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի կնքման կարգն ու պայմանները հստակեցնելու նպատակով Վրաստանի Շոթա Ռուսթավելու անվան ազգային հիմնադրամի տնօրեն Մ. Նիկաբերիձեն 2018թ. աշնանը կհրավիրվի Հայաստան:

10. Գործուղվողը

Սամվել Հարությունյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

17.07.2018թ.